



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԵՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԵՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԴ
ԳԵՏՆԵԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԵՍՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ (ԱՆԿՈՒՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍՏՐԱԿ



«ՉԱՆԳՆՉՈՒԹՅՈՒՆ»
ԳՆԱԶԱՐՄԱՆ ԲԵՆԵՎՈՅԻՆ
ԿՈՄՔԻՆԱՏ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



**SCIENTIFIC
ARTSAKH**

**НАУЧНЫЙ
АРЦАХ**

№ 2(3), 2019

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(3), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

**Նվիրվում է Երևանի պետական համալսարանի
հիմնադրման 100-ամյակին**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՄԻՍՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
Ռուզաննա ՀԱՎՈՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 2(3), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 472 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 2-րդ համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Հարավային Օսեթիան, Ռուսաստանի Դաշնությունը և Ուկրաինան ներկայացնող մոտ հինգ տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

*Dedicated to the 100th Anniversary
of Yerevan State University*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 2(3), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 472 pages.

The second issue of «Scientific Artsakh» journal 2019 comprises the scientific works of approximately 50 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Islamic Republic of Iran, Poland, South Ossetia, Russia and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert

Издаётся решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Посвящается 100-летию основания
Ереванского государственного университета*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джультетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 2(3), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 472 страниц.

В втором номере 2019 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Исламской Республики Иран, Польши, Южной Осетии, России и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее Армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

SՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

- Արման Ասրյան.** Համատիրությունների գործունեության խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում..... 148
Arman Asryan. The Barriers to the Operation of Condominiums and the Ways to Overcome them in the RA
Арман Асрян. Препятствия деятельности кондоминиумов и пути их преодоления в РА
- Մարինե Ավետիսյան.** Բանկային ճգնաժամերը պայմանավորող գործոնների համեմատական վերլուծություն հայաստանի և Արցախի տնտեսությունների համար..... 163
Marine Avetisyan. Comparative Analysis of the Factors of Banking Crises for the Economies of Armenia and Artsakh
Марине Аветисян. Сравнительный анализ факторов банковского кризиса для экономики Армении и Арцаха
- Նադեժդա Աֆյան.** Հայաստանի հանքավայրերի շահագործման շահագրգիռ կողմերի հակասությունները..... 176
Nadezdha Afyan. Conflicts of Stakeholders of Armenian Mining
Надежда Афян. Противоречия заинтересованных сторон по эксплуатации месторождений армении
- Ճաննա Բազիյան.** Տեխնոպարկերի ստեղծումը՝ որպես գիտելիքահեղձ տնտեսության զարգացման գործիք. օտարերկրյա փորձը և դասեր Հայաստանի համար..... 184
Zhanna Baziyan. Formation of Technoparks as an Instrument of Development of the Knowledge Economy: Foreign Experience and Lessons for Armenia
Жанна Базиян. Создание технопарков как инструмент развития экономики знаний: зарубежный опыт и уроки для Армении
- Տիգրան Բեգլարյան.** ՀՀ սոցիալական հիփոթեքի, բնակարանաշինության և հիփոթեքային շուկայի ֆինանսական խթանման միջոցները ՀՀ-ում..... 193
Tigran Beglaryan. Financial Measures of State Incentives for Social Mortgage, Housing Construction and Mortgage Market in RA
Тигран Бегларян. Финансовые меры государственного стимулирования социальной ипотеки, жилищного строительства и ипотечного рынка в РА
- Սամսոն Դավոյան, Լուսյա Գալոյան.** Երկրների իրականացրած բազմաբնույթ վերափոխումների ընդհանրական գնահատումը. փաստեր և վերլուծություններ..... 204
Samson Davoyan, Lusya Galoyan. Intergral Assessment of Various Reforms Implemented in Countries: Facts and Analysis
Самсон Давоян, Люся Галоян. Всеобщая оценка разнородных преобразований, осуществленных странами: факты и анализы
- Հայկարամ Դրմեյան.** Հայաստանի և Արցախի Հանրապետությունների համայնքների զարգացման հիմնախնդիրներն ու մարտահրավերները..... 219
Haykaram Drmeyan. Problems and Challenges of Community Development in Armenia and Artsakh
Айкарам Дрмеян. Проблемы и вызовы развития общин в Армении и Арцахе

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱԿԱՅՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտություն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
nafyan@rambler.ru*

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի ազգային հարստության մաս կազմող հանքավայրերի շահագործման արդյունքում առաջացած սոցիալական, բնապահպանական և տնտեսական բնույթի շահերի բախումները: Նպատակից բխող խնդիրներն են՝ համեմատականորեն տարբերակել և վեր հանել հանքարդյունաբերության տնտեսական, սոցիալական, բնապահպանական ու իրավական շահերի առաջնայնությունները, հակասությունները, ինչպես նաև դրանց կարգավորման հնարավոր ուղիները: Հոդվածում օգտագործվել է տվյալների համեմատական վերլուծական մեթոդը: Կատարվել է եպրահանգում, ըստ որի՝ Էկոլոգիական գնահատման ընթացքում կազմակերպվող հանրային լուումներում մեծամասամբ քննարկվում են նախագծերի՝ տեղային նշանակություն ունեցող սոցիալական ու տնտեսական հիմնահարցերը: Շատ հաճախ բնապահպանական ռիսկերը կամ հնարավոր բացասական հետևանքերը նույնիսկ չեն կարևորվում պատկան մարմինների վերջնական որոշումների կայացման ժամանակ: Հանքարդյունաբերության տարբեր փուլերում տնտեսական օգուտները գերադասում են շրջակա միջավայրի որակից՝ առանց հաշվի առնելու այն, որ շրջակա միջավայրի բարձր որակը երկարատև տնտեսական օգուտ է բերում: Բացի այս, շրջակա միջավայրի որակական խնդիրներից ելնելով՝ պատկան մարմինները բացասական եպրակացությամբ պետք է մերժեն բոլոր նոր տեսակի մետաղական հանքավայրերի շահագործումը, խրախուսելով պոչամբարների վերամշակման ծրագրերը:

Հիմնաբառեր՝ ազգային հարստություն, հանքարդյունաբերություն, պոչամբար, Էկոլոգիական գնահատում, հանրային լուումներ, կայուն զարգացում, բնապահպանական փորձաքննություն, շրջակա միջավայրի վրա ազդեցություն:

Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիները, ըստ օրենքի³⁰⁶, պարտադիր պետք է մասնակցեն ազգային տնտեսության զարգացմանն առնչվող, ինչպես նաև ազգային հարստության շահագործմանը վերաբերող որոշումների կայացման գործընթացներին: Սակայն գործնականում այդ մասնակցությունը հասարակական լուումների տեսքով կրում է ձևական բնույթ և ամենևին չի ազդում որոշումների արդարացի կայացման գործընթացներին: Ենթադրվում է, որ Հայաստանում հանքարդյունահանման նախագծերի շուրջ ձևավորված տարածայնությունների զգալի մասը պայմանավորված է տարբեր հասարակական շերտերի շահերի բախման և ապատեղեկացվածության հետ, ինչպես նաև հասարակական լուումների ոչ պատշաճ իրականացման հետ: Հասարակական

* Հոդվածը ներկայացվել է 29.10.2019թ., գրախոսվել՝ 05.11.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

³⁰⁶ ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուա, 1998)

լումների անցկացման պարտադիր լինելը կարևոր նախապայման է բնապահպանական փորձաքննության ընթացքում՝ բարձրաձայնելու այնպիսի սոցիալական, իրավական, բնապահպանական ու տնտեսական խնդիրներ, որոնք դեռևս չեն քննարկվել նախագծի համալիր մշակման շրջանակներում: Հոդվածում հակիրճ կփորձենք ներկայացնել այն տարածայնությունները, որոնք առաջանում են և հաճախ էլ անտեսվում են հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող որոշումների կայացման ընթացքում:

Ազգային տնտեսության մեջ կարևոր կշիռ ունեցող հանքարդյունաբերության ոլորտը՝ որպես արտահանումից ստացվող եկամուտների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման աղբյուր, տնտեսապես գրավիչ է ու հեռանկարային: Քանի որ Հայաստանում ազգային հարստության բաժին կազմող օգտակար հանածոների պաշարի համախառն արժեքը գերազանցում է 120.0 մլրդ դոլարին համարժեք դրամը, իսկ հետախուզված ու նախնական գնահատված պաշարների (առանց քաղցրահամ ջրերի) կորզվող արժեքը կազմում է մոտ 90.0 մլրդ դոլարին համարժեք դրամ³⁰⁷: Սակայն այլ է պատկերը, եթե համեմատենք Համաշխարհային բանկի ուսումնասիրության արդյունքների հետ. այդ դեպքում համաշխարհային խոշոր հանքավայրերի ցանկում Հայաստանի պղնձամոլիբդենային ամենախոշոր հանքավայրն իր մեծությամբ գրավում է մոտ 110-րդ տեղը, իսկ ոսկու ամենախոշոր հանքավայրը ոսկու 300 խոշորագույն հանքավայրերի ցանկից դուրս է³⁰⁸: Այսինքն՝ վերջին տարիներին Հանրապետության երկրաբանական ֆոնդում հաշվառված ևս 871 հանքավայրերը և 580 հանքերևակումները համարվում են շատ փոքր, փոքր ու միջին (ըստ շահագործման ժամկետի և պաշարի ծավալի)³⁰⁹: Փաստորեն, շահագործման կարճ ժամանակահատվածն աննշան է դարձնում դրանց նպաստը ազգային բարեկեցության մեջ, իսկ շրջակա միջավայրին հասցրած վնասը՝ ահռելի: Հանքարդյունաբերական աշխատանքների հետևանքով առկա է օդի, ջրի, հողի (լանդաֆտներ), կենսաբազմազանության զգալի շարունակական աղտոտվածություն:

Մեկ այլ համեմատական. հանքարդյունաբերության ոլորտում գերիշխող խոշոր հանքերը վերջին 5 տարվա տնտեսական տվյալների³¹⁰ համաձայն աշխատում են ոչ տևական ու անկայուն շահույթով: Եվ այս այն դեպքում, երբ վերջին 7-8 տարվա ժամանակահատվածը համարվում է ապրանքների՝ պատմականորեն բարձր գների շրջան³¹¹, և երբ հայտնաբերված մետաղական հանքավայրերից շահագործվողների մասնաբաժինը կազմում է 84%:

Այնուամենայնիվ, 2017թ. հարկունակ բազա հանդիսացող հանքագործական (35,5%) և մշակող արդյունաբերական (9,3%) ոլորտներում ստեղծված համախառն ավելացված արժեքի անվանական աճ է արձանագրվել 2017թ-ին 3,2 %-ով:

Ի համեմատ այլ ոլորտների (առևտուր՝ 20,5%, շինարարություն 4,2%)՝ հանքարդյունաբերության ոլորտը պետության համար ապահովում է բարձր հարկային եկամուտներ³¹²: 2017թ. հարկային մարմինների կողմից ապահովված բնօգտագործման վճարի աճը հիմնականում պայմանավորված է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում

³⁰⁷ Համաշխարհային բանկ, Armenia - Strategic mineral sector sustainability assessment (Washington D.C.: The World Bank Group, 2016), էջ 23:

³⁰⁸ Համաշխարհային բանկ, Armenia - Strategic mineral sector sustainability assessment (Washington D.C.: The World Bank Group, 2016).

³⁰⁹ www.minenergy.am, www.geo-fund.am, www.mnp.am.


³¹⁰ <http://www.minfin.am/hy/archive/0/0/0/0/0/0/4>.

³¹¹ <http://www.minfin.am/hy/archive/0/0/0/0/0/0/4>.


³¹² http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf.

ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի մուտքերի 9,917.1 մլն դրամ կամ 54,2% աճով³¹³:

Գրաֆիկ 1. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում³¹⁴



Գրաֆիկ 2. Հանքարդյունաբերության ոլորտի հաշվարկված հարկեր և վճարներ, պետական բյուջե, 2016-2017թթ³¹⁵



Հարկ է նշել, որ հասարակ ռոյալթին, որը կիրառվում է միայն որպես եկամուտների տոկոս, ավելի հեշտ է կառավարել, մինչդեռ շահութաբերության փոփոխականի վրա հիմնված բաղադրիչ ունեցող ռոյալթիները պահանջում են ավելի մանրամասն վերահսկողություն և կարող են վտանգել հարկային եկամուտները շահույթի թերհայտարարման պատճառով (օգտագործելով տրանսֆերային գներ կամ

³¹³ http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf.

³¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՃԹՆ զեկույց 2018, www.armstat.am:

³¹⁵ http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf.

հարկերից խուսափելու որևէ այլ մեթոդ)³¹⁶: Այսինքն՝ ևս մեկ հակասություն, երբ հանքարդյունաբերության ոլորտի տնտեսվարող սուբյեկտներն, ապահովելով եկամտային մեծ հոսքերի շրջանառություն, սովորաբար շահագործման ընթացքում վնասներ են առաջացնում շրջակա միջավայրի վրա և չեն կարող համարվել տնտեսապես կայուն, ինչն էլ վկայում է այն մասին, որ հանքավայրերի (շահագործվող, լքված) և պոչամբարների էկոլոգիական անվտանգության հսկողությունն ու վերահսկողությունը, ինչպես նաև վերականգնման միջոցառումները պետք է իրականացվեն՝ ելնելով բնապահպանական վճարներից³¹⁷, մասնավորապես համայնքների վարչական ու ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումներից, որոնք հանդիսանում են համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար նպատակային միջոցներ, սակայն իրենց նպատակային թիրախներին չեն հասնում: Չնայած նրան, որ նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները համաձայնեցվում են բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական մարմինների հետ³¹⁸: Արձանագրված է, որ համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի՝ մետաղական հանքաքար արդյունահանող 27 ընկերություններից միայն 4-ն են, որ վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ են կատարում համայնքային բյուջեներ³¹⁹: Հավելենք, որ Լույսիսկ միջազգային ներդրումային ընկերությունները պահանջում են ՇՄԱԳ³²⁰ փաստաթղթում ներառել նաև հանքավայրերի փակման հետ կապված խնդիրների լուծումներ: Մինչդեռ կարգավորող դաշտի որոշակի բացթողումներն արդեն իսկ շահագործման սկզբում նշանակալի վտագներ են առաջացնում հարակից համայնքների կամ հողօգտագործողների համար պոչամբարների պատահական արտահոսքի կամ լեռնատեխնիկական վթարների տեսքով: Վերահսկողության ու հսկողության համար պատասխանատու կառույցների կատարողականը պետք է լինի հաստատուն ու հուսալի՝ աշխատանքների շարունակականությունն ապահովելու համար, իսկ կուտակված տնտեսական օգուտները պետք է բաշխվեն արդարության սկզբունքով: Եվս մեկ խոչընդոտ կա՝ լքված ու շահագործվող հանքավայրերի սեփականատերերին հասցեական պատասխանատվության ենթարկելն էլ անհնար է, քանի որ շատ ընկերություններ գրանցված են օֆշորային գոտիներում, իսկ բաժնետիրական ընկերությունների մասին տվյալները պաշտպանվում են նաև ներպետական օրենսդրությամբ՝ առաջացնելով շահերի բախման ու պաշտոնական լիազորությունների չարաշահման հնարավոր ռիսկեր:

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանման դրամագլխի միջոցները, միևնույն է, չեն բավականացնում աղտոտման փոխհատուցման և շրջակա միջավայրի կառավարման համար համարժեք միջոցառումներ իրականացնելու համար: Արդյունքում հանքարդյունաբերության ոլորտի բացասական ազդեցության մասշտաբներն օրեցօր խորանում են շրջակա միջավայրի բոլոր ոլորտներում: Մասնավորապես արդյունաբերական կեղտաջրերի, ինչպես նաև արդյունաբերական թափոններով աղտոտված տիղմի ներթափանցման պատճառով ջրային ավազանների

³¹⁶ Համաշխարհային բանկ, Armenia - Strategic mineral sector sustainability assessment (Washington D.C.: The World Bank Group, 2016),

³¹⁷ 2001թ. ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք

³¹⁸ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշում

³¹⁹ Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույց 2016-2017թ.:

³²⁰ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

(օրինակ՝ Դեբեդ գետի ստորին հոսանք, Ողջի գետի ավազան) ֆլորան և ֆաունան խիստ աղքատացել են, իսկ աղտոտված ջուրն, օգտագործվելով ոռոգման նպատակներով, վատացնում է ագրոկենսացենոզների զարգացման պայմանները: Գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 86.5%-ը ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման, քանի որ լեռնահանքային ձեռնարկություններին հանձնված հողերի ընդհանուր տարածությունը կազմում է 9700 հա, որից խախտված հողերը՝ 8275 հա, իսկ պոչամբարների տակ գտնվող հողերը՝ 1400 հա³²¹: Ընդ որում, հողային ծածկույթը ոչ միայն հողային շերտ է, այլև մի ամբողջական կենսածին համակարգ, որն իր մեջ ներառում է հողը, ջրային պաշարները, բուսականությունը և այլ կենսազանգվածներ: Ինտենսիվ տեխնածին ագրեցությունը հանգեցնում է Էկոհամակարգերի վերականգնման բնական մեխանիզմների խախտմանը, իսկ Էկոլոգիական համակարգերի որակի բացասական փոփոխությունների հետ միասին ի հայտ են գալիս մարդու առողջության վատթարացման մի շարք առանձնահատկություններ՝ հիվանդությունների նոր տեսակներ և դրանց երիտասարդացում: Ըստ համապատասխան փորձագետների գնահատականների՝ դրանք կարելի է դասել հիմնականում վարակային և մակաբուծական, վերին շնչուղիների, աղետամոքսային համակարգի, նորագոյացությունների, ալերգիկ և մի շարք այլ հիվանդությունների շարքին: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տեղեկատվության՝ վերոնշյալ հիվանդություններն ունեն աճող միտումներ, որին նպաստում են նաև բնակչության շրջանում աղքատության բարձր մակարդակով պայմանավորված առողջապահության խիստ ցածր մատչելիությունը:

Աղյուսակ 1. Բնապահպանության ոլորտում իրավախախտումների քանակը, վարչական տույժերը և վնասի հատուցման գուրմարները, 2017թ.³²²


	Խախտումների քանակը	Վարչական տույժի ենթարկվածների թվաքանակը, մարդ	Վարչական տույժի համար սահմանված գումարը, հազ. Դրամ	Վնասի հատուցման արձանագրությունների քանակը, միավոր	Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների, հազ. դրամ
Ընդերքի	8	7	730	-	-
Ջրային պաշարների	3	3	600	-	-
Օդային ավազանի	55	53	2800	2	935.9
Հողային պաշարների	35	36	2130	15	1422

³²¹ Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր, Բնապահպանության նախարարություն, 2014թ. :

³²² Աղբյուրը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2018թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ»:

Թափոնի	19	15	940	1	60
Էկոփորձաքննություն	10	9	760	-	-
Սահմանված ժամկետում հաշվետվություն չներկայացնելու համար	101	97	5800	-	-
Բուսական աշխարհի	691	415	32361	716	3394446.4
Կենդանական աշխարհի	126	59	4700	43	9807
Ընդամենը	1048	694	50821	759	3404253.4

Գրաֆիկ 3. Բնապահպանության ոլորտում իրավախախտումների քանակը, վարչական տույժերը և վնասի հատուցման գումարները, 2017թ.³²³



Աղյուսակ 1-ից և գրաֆիկ 3-ի համեմատականից պարզ է դառնում, որ բնապահպանության ոլորտում իրավախախտումների և դրանց կանխարգելմանն ուղղված վարչական տույժերի թվաքանակի միջև կան հստակ տարբերություններ, առավել ևս դրանցից առաջ եկած վնասի հատուցման արձանագրությունների ու փոխհատուցված գումարների միջև: Ակնհայտ է նաև այն փաստը, որ ընդերքի

³²³ Աղբյուրը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2018թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ»:

ուլորտում իրավախախտումների համար սահմանված վարչական տույժերը նույնիսկ չեն փոխհատուցվել:

Անժխտելի է միայն այն փաստը, որ կորպորատիվ հանրային պատասխանատվության շրջանակներում սովորաբար հանքարդյունաբերող կազմակերպություններն ազդակիր համայնքներում իրականացնում են նվիրատվություններ, բարեգործություններ, մասնավորապես աջակցում են համայնքային նշանակություն ունեցող ճանապարհների կառուցմանն ու վերանորոգմանը, գազատարների ու ջրատարների վերանորոգմանն ու կառուցմանը, ինչպես նաև կատարում են ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցում, մանկապարտեզների, դպրոցների ու մշակութային օջախների վերանորոգում, ստեղծում են աշխատատեղեր և ապահովում ապրուստի միջոցներ շատ բնակավայրերում, որտեղ այլ բնույթի տնտեսական հնարավորությունները սակավ են: Սակայն շատ սակավ են բնապահպանական ու առողջապահական խնդիրների լուծմանը հատկացված սուբվենցիաները³²⁴:

Չնայած առկա առավելություններին և տնտեսության մեջ ունեցած դերին՝ պետք է նշել, որ հանքարդյունաբերության ոլորտը չի ապահովում կայուն զարգացում: Առաջնային պետք է խրախուսել պոչամբարների վերամշակումը և բնապահպանական հարցերի կարգավորումները՝ ստեղծելով տնտեսական այլընտրանքային հնարավորություններ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ, օրինակ, պղնձի պոչամբարների վերամշակման ծրագրերը չափազանց հազվադեպ են: Հստակեցնելով Հայաստանի պոչամբարների պարունակության ծավալները և վերամշակման էկոլոգատնտեսական գնահատման ռիսկերը, ինչպես նաև մշակելով արդյունավետ նախագծեր՝ պետք է դադարեցնել մետաղական որևէ նոր հանքավայրի շահագործումը:

Այնուհետև անհրաժեշտ է կարգավորել հնարավոր բնապահպանական բացասական ազդեցությունների ու հետևանքների համար վարչական ու տնտեսական պատասխանատվություն կրելու հիմնահարցերը: Վերջինս էլ պահանջում է ավելացնել բնապահպանական ոլորտում առկա էկոլոգատնտեսական վնասի գնահատման մեթոդական մոտեցումների իրավական ու գործնական կիրարկելիության հիմնախնդիրների ուսումնասիրությունները, ինչն էլ կապահովի բնապահպանական, սոցիալական ու տնտեսական տեսանկյունից հավասարակշռված միջոցառումների ճիշտ ընտրություն:

CONFLICTS OF STAKEHOLDERS OF ARMENIAN MINING

NADEZDHA AFYAN

Assistant at the Chair of Environmental Economics at ASUE,

PhD in Economics,

Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is to present the social, environmental and economic conflicts of interests that have arisen as a result of the exploitation of deposits that are part of the national wealth of Armenia. The objectives arising from the goal - comparative differentiation and identification of priorities of economic, social, environmental and legal interests of the mining industry, contradictions, as well as possible ways to resolve them. The article uses a comparative analytical method of data. It is concluded that in public hearings organized during

³²⁴ Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույց 2016-2017թ.:

the environmental assessment social and economic problems of local importance in the projects are mainly discussed. Environmental risks or potential adverse impacts are not identified even when the relevant authorities make final decisions. Moreover, at different stages of production, economic benefits do not favour environmental quality and do not take into account the fact that high environmental quality brings long-term economic benefits. In addition to these environmental quality problems, the relevant authorities should abandon the operation of all new types of metal mines, encouraging tailings processing projects.

Key words: *National wealth, mining, tailing, environmental assessment, public hearings, sustainable development, environmental expertise, environmental impact.*

ПРОТИВОРЕЧИЯ ЗАИНТЕРЕСОВАННЫХ СТОРОН ПО ЭКСПЛУАТАЦИИ МЕСТОРОЖДЕНИЙ АРМЕНИИ

НАДЕЖДА АФЯН

*Ассистент кафедры эконимики
природопользования АГЭУ,
кандидат эконимических наук,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – представить социальные, экологические и экономические столкновения интересов, возникшие в результате эксплуатации месторождений, являющихся частью национального богатства Армении. Вытекающие из цели задачи: сравнительная дифференциация и выявление приоритетов экономических, социальных, экологических и правовых интересов горнодобывающей промышленности, противоречий, а также возможных путей их урегулирования.

В статье использовался сравнительно-аналитический метод. Делается вывод о том, что на общественных слушаниях, организуемых в ходе экологической оценки, в основном обсуждаются социальные и экономические проблемы, имеющие местное значение. Очень часто экологические риски или потенциальные неблагоприятные воздействия не выделяются даже тогда, когда соответствующие органы принимают окончательные решения. Более того, на разных этапах добычи экономические выгоды предпочитают в ущерб качеству окружающей среды, игнорируя тот факт, что высокое качество окружающей среды приносит долгосрочные экономические выгоды. В дополнение к указанным проблемам, соответствующие органы власти должны отказаться от эксплуатации всех новых типов металлических рудников, поощряя проекты по переработке хвостохранилищ.

Ключевые слова: *национальное богатство, горнодобывающая промышленность, хвостохранилище, экологическая оценка, общественные слушания, устойчивое развитие, природоохранная экспертиза, воздействие на окружающую среду.*